ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև պաշտպանության բնագավառի արդյունաբերության ձեռնարկությունների միջև արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

Կողմերի պաշտպանության բնագավառի արդյունաբերության ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսական, արտադրական և գիտատեխնիկական համագործակցության համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պարտավորվում են փոխշահավետ հիմքի վրա պահպանել պաշտպանական և ժողովրդատնտեսական նշանակության արտադրանքների մշակման և արտադրության, ռազմական բնույթի ծառայությունների մատուցման գործում պաշտպանական արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների միջև ստեղծված արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիան, ինչպես նաև կոոպերացիան՝ այդ նպատակով անհրաժեշտ հումքի, կիսաֆաբրիկատների (կիսապատրաստուկների), լրակազմող արտադրանքների, ուսումնական ու օժանդակ գույքի մատակարարումների գործում:

Հոդված 2

Կողմերը համաձայնեցին, որ հումքի, կիսաֆաբրիկատների (կիսապատրաստուկների), լրակազմող արտադրանքների, ուսումնական ու օժանդակ գույքի, տեխնոլոգիական և գիտատեխնիկական բնույթի ծառայությունների կոոպերատիվ մատակարարումներն իրականացվում են Կողմերի օրենսդրությանը համապատասխան և Կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերի հիման վրա:

Հոդված 3

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության սուբյեկտների միջև ստեղծված կոոպերատիվ կապերի շրջանակներում սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության համար անհրաժեշտ հումքի, կիսաֆաբրիկատների (կիսապատրաստուկների), լրակազմող արտադրանքների և այլ նյութական ռեսուրսների փոխադարձաբար մատակարարումներն իրականացվում են համաձայնեցված ցանկերով:

Նշված ցանկերը, որոնք պարունակում են ձեռնարկությունների ցուցակները, ինչպես նաև արտադրանքի անվանացանկը և ծավալները, ամեն տարի համաձայնեցվում են Ռուսաստանի Դաշնության պաշտպանության բնագավառի արդյունաբերության պետական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության արդյունաբերության նախարարության կողմից:

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների միջև փոխադարձ հաշվարկների կարգը որոշվում է Կողմերի օրենսդրությամբ և գործող միջկառավարական համաձայնագրերով:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված ցանկերով նախատեսված մատակարարվող ապրանքները ենթակա չեն քվոտավորման (թույլատրված նորմավորման) և արտոնագրման:

Կողմերը ցանկերով նախատեսված ապրանքներն ազատում են մաքսային տուրքերից, ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տարածքներում:

Հոդված 5

Կողմերը խորհրդակցություններ կանցկացնեն կոոպերացիայի միջոցով մատակարարվող ապրանքների համար սահմանված շահութաբերության սահմանային մակարդակները մոտեցնելու ուղղությամբ:

Հոդված 6

Կողմերը համատեղ կօգտագործեն գործող և նոր ստեղծվող փորձադաշտերը, փորձարկման կենտրոնները և լաբորատորիաները:

Աշխատանքները կկատարվեն Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն:

Փորձարկումների արդյունքները ճանաչվում են երկու Կողմերի կողմից:

Հոդված 7

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների և կազմակերպությունների մասնակցությամբ զենքի և ռազմական տեխնիկայի նոր նմուշների արտադրության և մշակման հարցերը կսահմանվեն միջկառավարական առանձին համաձայնագրերով:

Հոդված 8

Կողմերը չեն վաճառի կամ փոխանցի երրորդ կողմին, այդ թվում նաև օտարերկրյա ֆիզիկական, իրավաբանական անձանց և միջազգային կազմակերպություններին, փոխադարձաբար առաքվող ռազմական արտադրանքը, դրանց վերաբերյալ գիտական և տեխնիկական տեղեկությունը, հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև, առանց նախնական փոխադարձ համաձայնության, չեն օգտագործի հայտնագործությունները և «նոու-հաու»-ները:

Հոդված 9

Կողմերը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունների զինվորական ներկայացուցչություններին կհանձնարարեն իրենց ձեռնարկություններում իրականացնել ռազմատեխնոլոգիական նշանակության արտադրանքների ընդունումը՝ գործող տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի համաձայն:

Հոդված 10

Բոլոր վիճելի հարցերը, որոնք, սույն Համաձայնագրին համապատասխան, կարող են առաջանալ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների միջև ապրանքների առաքման ժամանակ, կլուծվեն արտաքին առևտրական կոնտրակտներում (պայմանագրերում) նախատեսված պայմանների համաձայն:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի իրականացման վերահսկումը և համակարգումը հանձնարարել՝

Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության բնագավառի արդյունաբերության պետական կոմիտեին:

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության արդյունաբերության նախարարությանը:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի համաձայնությամբ:

Սույն Համաձայնագիրը կգործի 3 տարվա ընթացքում և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ երեքամյա ժամանակաշրջանների համար, եթե Կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս առաջ գրավոր հայտարարություն չանի սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության վերաբերյալ:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի Կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջև՝ դրա գործողության ընթացքում կնքված և չավարտված կոնտրակտների (պայմանագրերի) պայմանների վրա:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի մարտի 30-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի մարտի 30-ից: